Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
«1032-11002/2025-ԼԿ1» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Վանաձոր 1) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2025-ԼԿ1» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 15.01.2025 - 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 03.01.2025 - 31.03.2025 |
| Ներկայացման օր | 11.04.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Հովսեփյան, ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.

1) սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն
2) կենցաղային սպասարկում
3) բժշկական օգնություն և սպասարկում
4) Լվացքատան ծառայություն
5) Սննդի տրամադրում
6) Շահառուների կոմունալ վարձավճարների փոխհատուցում ձմռան ամիսներին՝ ապահովելով տաք ձմեռ նրանց համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

**<u>Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն</u>**

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է թվով 70 շահառուների անհատական կարիքի գնահատում և ըստ գնահատման կազմվել է Անհատական սոցիալական ծրագիր: Վեր են հանվել խնդիրները և կազմվել են անհատական սոցիալական

ծրագրերը: Բոլոր շահառուների հետ կնքվել են 2025թ.-ի ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Հաշվետու եռամսյակում սոցիալական աշխատողի կողմից կատարվել են տնային այցելություններ շահառուների բնակարաններ, ծանոթացել շահառուների սոցիալ-առողջապահական ընթացիկ վիճակին:

Կատարվել են թվով 13 շահառուների հունվար-մարտ ամիսների փաստագրում անապահովության գնահատման համակարգում:

1 շահառուի համար սոցիալական աշխատողը դիմել է ՄՍԾ, ստացել անապահովության միավորը հավաստող փաստաթուղթ:

2 շահառուների ուղեկցվել է բանկ՝ կենսաթոշակը քարտային տարբերակով ստանալու համար ամենամյա ստորագրության համար:

2 շահառուների համար սոց.աշխատողը դիմել է Վանաձորի համայնքապետարան՝ բնակության վայրը հաստատող փաստաթուղթ ստանալու համար:

*Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:*

**<u>Կենցաղային սպասարկում</u>**

Հաշվետու ամիսներին սոցիալական խնամողների կողմից կատարվել է կենցաղային սպասարկում ՝ ըստ պետական չափորոշիչների: Ա խմբի շահառուներին սոցիալական խնամողները կատարել են ամենօրյա այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2-ական այցեր՝նախապես կազմված գրաֆիկների հիման վրա:

Սոցիալական խնամողները մատուցել են հետևյալ ծառայությունները. անձնական հիգիենայի պահպանում, լոգանք, մարմնի մասնակի խնամք, տակդիրի փոխում, սննդի պատրաստում, կերակրում, լվացքի կազմակերպում, արդուկում, բնակարանի հարդարում, գնումներ, կոմունալ վճարումներ: Շահառուներին ուղեկցել են նաև խանութ, փոստատուն, բանկ՝ քարտային թոշակը կանխիկացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում գործել է նաև **լվացքատունը**, որտեղ լվացվել, արդուկվել են շահառուների հագուստները և հատկացվել վերջիններիս: Այն շահառուները, ովքեր իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոցիալական խնամողները լվացքը հագուստները լվացել են շահառուի բնակարանում:

*Ծրագրի շահառուները ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների և կոմունալ վճարների շնորհիվ շահառուն ապահովված է իրեն անհրաժեշտ ապրանքներով:*

**<u>Բժշկական օգնություն և սպասարկում</u>**

Հունվար-մարտ ամիսներին կատարել են տնային այցելությունները նախապես կազմված այցելությունների գրաֆիկի և պետական չափորոշիչներին համապատասխան: Ա խմբի շահառուներին կատարել են շաբաթական 2-ական այցեր, իսկ Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 1-ական այց: Կարիքի դեպքում կատարել են նաև լրացուցիչ այցելություններ: Այցելությունների ժամանակ կատարվել են արյան ճնշման, թթվածնի քանակի, շաքարի մակարդակի չափումներ, միջմկանային ներարկումներ, վերքերի մշակումներ, դեղորայքի ընդունման վերահսկում, խորհուրդներ, վերականգնողական վարժություններ: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել շահառուների թաղամասային բժիշկների հետ, ստացել են պետության կողմից հատկացվող դեղորայքը:

1 շահառուի համար կատարվել է բժշկի կանչ՝ առողջական վիճակի վատացմամբ պայմանավորված:

1 շահառուի համար կատարել է շտապ օգնության ծառայության կանչ և շահառուի տեղափոխում Վանաձորի բժշկական կենտրոն: Կատարվել է շահառուի ստորին վերջույթի 2 մատի ամպուտացիա:

*Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների, դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և*

*բարելավված է շահառուների կայուն առողջական վիճակը:*

**<u>Սննդի հատկացում, կոմունալ ծախսերի փոխհատուցում</u>**

Հաշվետու ժամանակահատվածում շահառուներին հատկացվել են չոր սննդի փաթեթներ: Տարեցների բնակարանների ջեռուցում և նրանց համար տաք ձմեռ ապահովելու նպատակով իրականացվել է կոմունալ վարձավճարների փոխհատուցում:

*Սննդի տրամադրման, ինչպես նաև կոմունալ վճարների փոխհատուցման շնորհիվ մեղմվել են շահառուների սոցիալական կարիքները:*

**<u>Մշակութային միջոցառման կազմակերպում</u>**

Մարտի 25-ին ծրագրի 5 շահառուներ մասնակցել են «Արմինա Գարդեն» ստուդիայի հիմնադիր Անի Ալավերդյանի վարպետաց դաս-աշխատարանին: Միջոցառմանը մասնակցել են այն տարեցները, ովքեր իրենց բնակարաններում խնամում են սենյակային բույսեր: Վարպետաց դաս-աշխատարանի ժամանակ խոսվեց սենյակային բույսերի ու ծաղիկների առանձնահատկություններից, հոգատարությունից: Հանդիպման մասնակիցները ստացել են նաև սենյակային բույսեր և ծաղիկներ, որոնց այսուհետ կխնամեն իրենց բնակարաններում:
*Մշակութային միջոցառումները նպաստում են, որ շահառուները դուրս գան մեկուսացումից և իրենց հասարակության լիարժեք անդամը զգան:*

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են շաբաթական աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

*Ծրագրային թիմի կողմից շահառուների համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների հասանելիություն, անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, անհրաժեշտ դեղորայքի, սննդի հասանելիություն:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Սենյակային բույսերի վարպետաց դաս-աշխատարան՝
https://www.facebook.com/photo?fbid=1071323275031939&set=pcb.1071324395031827
Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի հաջորդ եռամսյակում պլանավորվում է շարունակել ծրագրով նախատեսված բոլոր գործողությունները, մասնավորապես.

1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Հունվարին ծրագրի աշխատակազմը մասնակցել է «Թիմային աշխատանք» թեմայով երկօրյա արտագնա աշխատաժողովի: Այն հնարավորություն է ծրագրային աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպման համար:
Հունվար և մարտ ամիսներին ծրագրի համակարգողը մասնակցել է Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի և Շվեյցարիայի Լյուցերնի համալսարանի համատեղ «Վերականգնողական ծառայությունների միջոցով առողջ ծերացման խթանումը Հայաստանում «Առողջապահական համակարգի ուսուցման մոտեցման» կիրառմամբ» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Առողջապահական համակարգերի գիտելիքների յուրացում » և «Քաղաքականության ամփոփագրերի մշակում և շահակիցների երկխոսություն վերականգնողական աշխատանքներում՝ որոշումների կայացմանն աջակցելու համար» թեմաներով դասընթացներին:
Փետրվար-մարտ ամիսներին Վանաձորի պետական բժշկական քոլեջի քույրական գործ բաժնի ավարտական կուրսի ուսանողների համար անց են կացվել «Հիվանդի խնամք» թեմայով դասընթացները, որոնց մասնակիցները սովորում են խնամքի գործողությունների պլանավորում, բուժքույրական խնամք՝ հարմարեցված տնային պայմաններին և տնային խնամքի առանձնահատկություններին: Ուսումնասիրվում են նաև տարեց հասակում առկա հիվանդությունները, դրանց պարագայում հիվանդի խնամքը: Գործնական պարապմունքները շարունակվում են նաև հիվանդների բնակարաններում: Դասընթացները կշարունակվեն նաև ապրիլ ամսին: Այն հաջողությամբ ավարտած մասնակիցները կստանան հավաստագրեր:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Գլխավոր քարտուղար՝ Ա. Մուրադյան | Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Կ.Տ.

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 60/70 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 63 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 66 |
| 1.4 | այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք | 0 |
| 1.4.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). նշել *յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –7 (6 կին, 1 տղամարդ)<br>Բ - 63 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 70 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 70 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 70 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 5 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 4 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>• *վնացքապան ծառայություն* | 17 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

«11» ապրիլ 2025 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

(ստորագրություն)

Կ.Տ.